



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

Հունիսի 25, 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Նորություններ բյուջեի վերաբերյալ

Շնորհակալություն ձեր աջակցության համար: Նահանգապետ Նյուտոնն ու օրենսդիր մարմինները որոշում են կայացրել [բյուջեի վերաբերյալ](#), որը կամփոփվի մինչև հունիսի 30-ը: Ինչքան որ մենք գիտենք, այն կանխարգելում է մեր դպրոցներին սպառնացող 10% կրճատումը, բայց դեռ բավական ֆինանսավորում չէ մեր դպրոցների համար: Մենք պետք է շարունակենք մեր աջակցությունը դաշնային մակարդակով, որպեսզի Մենատն ու նախագահը ֆինանսավորում հատկացնեն օգոստոսին դպրոցները ապահով կերպով բացելու համար: Պայքարը դեռ ավարտված չէ: Միաժամանակ, կարող ենք զգուշությամբ առաջ տանել մեր բյուջեն և աշխատանքից չհեռացնել աշխատակիցներին: Մենք կշարունակենք աշխատանքի չընդունել ոչ մի նոր աշխատակցի, կվերանայել թափուր պաշտոնները և չկատարել ոչ աշխատանքային ծախս այս ֆինանսական դժվարին շրջանում: Մենք կշարունակենք քննարկել Հորաս Մենն կենտրոնի վճարների ավելացումը և/կամ կպահանջենք երեխաների խնամքի մեկ այլ որակյալ կենտրոն, որը կստանձնի մի քանի կամ բոլոր խնամքի կենտրոնների պարտականությունը և կապահովենք նաև երեխաների խնամքը Հորաս Մենն կենտրոնում:

2020-21 ուսումնական տարվա ընթացքում դպրոցների բացումը

Դպրոցները բացելու կոմիտեն շարունակում է համագործակցել և վերանայել ծնողների ու աշխատակիցների կողմից ուղարկված առաջարկները՝ աշնանային կրթական ամենալավ մոդելի մշակման համար: Մենք մշակել ենք հաճախակի տրվող հարցերի (FAQs) հետևյալ ցուցակը <https://www.burbankusd.org/reopeningfaqs>, որը հիմնված է ձեր նամակների վրա: Մա կենդանի փաստաթուղթ է, որը կթարմացվի Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության բաժնի կրթական հրամանների հիման վրա, որը շուտով կհրապարակվի: Խնդրում ենք նշել, որ այս հարցերից շատերը պետք է բանկացվեն Բրբենքի ուսուցիչների (BTA) և Կալիֆոռնիայի դպրոցի աշխատակիցների (CSEA) ասոցիացիաների հետ:

Ամենազվախալոր հարցը, որ մենք ստանում ենք այս օրերին.

Ինչու՞ է կոմիտեն առաջարկում առավոտյան/կեսօրից հետո մոդելը: Բավականին քննարկում է տեղի ունեցել տարրական և միջնակարգ դպրոցների վերաբերյալ և եկել ենք այն համաձայնության, որ աշակերտներին կանտանավոր (երկուշաբթիից

հինգշաբթի) կրթական շփում է անհրաժեշտ: Սա հատկապես ճշգրիտ է հատուկ կարիքներ ունեցող աշակերտների համար: Նաև, մենք խուսափում ենք մեծ թվով աշակերտներ ունենալ ճաշի ժամի, որը կավելացնի հիվանդության փոխանցումը աշակերտների և աշխատակազմի համար: Ինչ վերաբերվում է երեխաների խնամքին, մենք տարբեր կարծիքներ ենք ստանում: Որոշ մարդիկ գերադասում են սովորական դասացուցակ, փոփոխականի փոխարեն կամ էլ 2 օրվա դասացուցակ: Իդեալական դասացուցակ չկա, բայց մենք միասին աշխատում ենք ժամանակին, անվտանգ և ամենահարմար կրթական միջավայրը ստեղծել: Մենք գիտակցում ենք, որ աշխատակիցները, ինչպես նաև ծնողներն ու աշակերտները, ցանկանում են իմանալ, թե ինչ է սպասվում: Մենք կշարունակենք հանդիպել մեր աշխատակիցների հետ, որպեսզի որոշենք թե, որ մոդելն է լինելու ամենալավը: Մենք հասկանում ենք, որ հիբրիդ մոդելներից ոչ մեկն իդեալական չէ, բայց մենք աշխատում ենք մեղմել խնդիրները:

Ընթացիկ տեղեկությունները տեղադրված են այս կայքէջում

<https://www.burbankusd.org/Reopening>

Կարող եք նաև ուղարկել ձեր առաջարկները re-opening@burbankusd.org հասցեին:

Եթե դեռ չեք լրացրել հարցաթերթիկը, խնդրում ենք կատարել մինչև **ուրբաթ, հունիսի 26-ը** մեզ օգնելու համար: Սա ոչ պարտավորեցնող հետազոտություն է և հուլիսի կեսերին կուղարկենք նաև մեկ այլ հարցաթերթիկ կրթական աշնանային մոդելն ընտրելու համար, եթե մենք առողջապահական ավելի պարզ հրահանգներ և մանրամասներ ունենանք մեր կրթական մոդելի վերաբերյալ:

[Elementary Survey \(Armenian\)](#) Տարրական դպրոցի հարցաթերթիկ հայերեն լեզվով

[Secondary Survey \(Armenian\)](#) Միջանկյալ և միջնակարգ դպրոցների հարցաթերթիկ հայերեն լեզվով

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Հիլլ

Գերատեսուչ